ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԽՍՀ-ՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ.

ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Մ.

Խորհրդային պետության հռչակումից հետո, անցումային շրջանում երկիրը կառավարվում էր ոչ ընտրովի իշխանության մարմինների՝ հեղկոմների միջոցով՝ սկսած գյուղականից, ավարտված բարձրագույն գործադիր, օրենսդիր և կարգադրիչ մարմնի՝ ***Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեով (Հայհեղկոմ):*** *1921 թ. կեսերից, երբ հանրապետության քաղաքական վիճակը համեմատաբար կայունացավ (չնայած դեռևս մոլեգնում էին սովն ու քայքայումը), անհրաժեշտ էր հանրապետության մակարդակով ընտրություններ կազմակերպել և ձևավորել օրինական, խորհուրդների բովանդակությանը համապատասխան բան-վորագյուղացիական ընտրովի իշխանություն: Այսինքն՝ խնդիր դրվեց* ***հեղկոմներից*** *անցում կատարել դեպի* ***խորհուրդները****:*

Շուրջ մեկ դար առաջ ձևավորված խորհրդային ընտրական համակարգի ու ընտրական գործընթացների ուսումնասիրությունը, անշուշտ, արդիական է և ուսանելի՝ այն իմաստով, որ դրանցով կարելի է գաղափար կազմել, թե տասնամյակների այդ պրակտիկան ինչ ազդեցություն ու հետևանք է թողել ժամանակակից հայաստանցի ընտրողի վրա, ինչու՞ ներկայիս ժողովրդա-վարական ընտրական արժեհամակարգի պայմաններում մեզանում չեն հաղթա-հարվում ընտրակեղծիքները, և դեռևս դժվար է խոսել ՀՀ սահմանադրական այն հիմնադրույթի մասին, թե՝ ***«իշխանությունը պատկանում է ժողովրդին»****[1]:*

ՀԽՍՀ բոլոր մակարդակների խորհուրդների ամենամյա ընտրությունները, որպես կանոն, անցկացվում էին ուշ աշնանը կամ ձմռան ամիսներին՝ կապված գյուղատնտեսական աշխատանքների ավարտի և մարդկանց համեմատաբար ազատ լինելու հանգամանքի հետ: Ընտրական գործընթացները կազմակերպում և իրականացնում էր այդ նպատակով ստեղծված ***Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ)*** *իր տեղական՝ գյուղական, քաղաքային, գավառամասային և գավառային ընտրական հանձնաժողովների հետ: Նրանք ղեկավարվում էին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի, տեղական կուսակցական և պետական մարմինների կողմից, համապատասխան աջակցություն ստանում կոմերիտմիության, արհմիու-թյունների և հասարակական այլ կազմակերպություններից: Հարկ է նշել, որ ընտ-րարշավների և ընտրական գործընթացների պրակտիկան առանց էական փոփոխությունների կիրառվում էր 1920-ական թթ., ընդհուպ մինչև 1930-ական թթ. կեսերը, երբ խորհրդային երկրում վերացել էին շահագործող տարրերը, և հաղթանակել էր սոցիալիզմը: Դրա հիման վրա էլ ընդունվեց նոր*

---

[1] *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Ե., 2005, էջ 8:*

սահմանադրություն՝ խորհրդային-բոլշևիկյան չափանիշներով և ավելի ժողովրդավարական ընտրական համակարգ սահմանելով:

Ընտրական գործընթացը բաղկացած էր երեք փուլից. 1/ կազմակերպական-տեխնիկական, 2/նախընտրական-հաշվետու, 3/բուն ընտրություններ:

Առաջինը, որ կարելի է կոչել նաև նախապատրաստական փուլ, ներառում էր ընտրական հանձնաժողովների (ԸՀ) ստեղծումը, ընտրացուցակների՝ ընտրողների և ձայնազուրկների ցուցակների կազմումը և ճշտումը, խորհրդակցությունների հրավիրումը, խորհուրդների անդամության թեկնածուների առաջադրումը, քարոզարշավը և այլն: Ընտրական ամբողջ գործընթացը համակարգում էր ԿԸՀ-ն, որը վերահսկում էր տեղական բոլոր ԸՀ-ների աշխատանքները, պատվիրում ընտրությունների համար անհրաժեշտ բոլոր ձևաթղթերը, մշակում և տեղամասեր ուղարկում ընտրական ժողովների օրինակելի օրակարգերը, նույնատիպ հաշվետվությունների ձևերը և այլն[2]:

Նախընտրական-հաշվետու փուլը տևում էր շուրջ 20 օր: Այդ ընթացքում լսվում էին գյուղխորհուրդների և գավառամասային գործկոմների հաշվետու զեկուցումները, նախ տեղի էին ունենում չքավորների կամ բատրակների խորհրդակցություններ, ժողովներ, այնուհետև՝ գյուղխորհրդի հաշվետու ժողովներ, որոնց ղեկավարությունը դարձյալ իրականացնում էր կուսակցությունը:

Երրորդ՝ ավարտական փուլում իրականացվում էին բուն ընտ-րությունները: Ընտրություններից 5 օր առաջ ընտրողները տեղեկացվում էին ընտրաժողովի օրվա մասին: Այնուհետև կատարվում էր մասնակիցների հաշվառում: Ընտրական հանձնաժողովը կամ նրա լիազորը հրավիրում էին ընտրաժողով: Ընտրություններում թեկնածուների քվեարկությունը կատարվում էին կամ նախապես կազմված ցուցակներով, կամ ըստ առանձին թեկնածությունների՝ ընտրական ժողովի հայեցողությամբ: Այսինքն՝ քվեարկության ձևը որոշում էր տվյալ ընտրաժողովը: Ընտրական հանձնաժողովը իրավունք չուներ առանձին թեկնածուների ցուցակ առաջարկելու: Ըստ կանոնադրության՝ **ընտրությունները կատարվում էին բաց քվեարկությամբ**[3]: Ոչինչ չի ասվում փակ (գաղտնի) քվեարկության մասին: Հասկանալի է, որ բաց քվեարկության դեպքում ամեն ինչ տեսանելի էր և հեշտ վերահսկելի: Կանոնադրության համաձայն, խորհրդի անդա-մության թեկնածուները կարող էին քվեարկվել անհատապես կամ ամբողջական ցուցակով: Ընտրված էր համարվում ժողովում ներկա ընտրողների պարզ մեծամասնության ձայները հավաքած անձը: Եթե ցուցակով էին քվեարկվում, ապա անցնում էին ցուցակում նշված բոլոր թեկնածուները: Ընտրաժողովի ընթացքի

---

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 112, ց. 8 c, գ, 7, թ. 158:

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 84, թ. 14: Բոլոր մակարդակի խորհուրդներում, այդ թվում՝ խորհուրդների համահայաստանյան համագումարներում, կատարվում էր բաց քվեարկություն՝ մանդատները բարձրացնելու միջոցով, և, որպես կանոն, որոշումներն ընդունվում էին միաձայն ու ծափահարություններով:

մասին կազմվում էր արձանագրություն, որը վավերացնում էին ժողովի նախագահն ու քարտուղարը:

ՀՍԽՀ բոլոր մակարդակի խորհուրդների առաջին ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են 1921 թ. դեկտեմբեր և 1922 թ. հունվար ամիսներին: Ընտրությունները ղեկավարում և ուղղորդում էր Կոմկուսը: 1921 թ. դեկտեմբերի 6-ին հետևեցին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի, իսկ դեկտեմբերի 7-ին և 9-ին ԿՀՀ-ի կոչերը՝ ուղղված Հայաստանի բանվորներին և աշխատավոր գյուղացիներին: Դրանցով դիմում էին Հայաստանի աշխատավորներին՝ թե ում պետք է ընտրել խորհուրդներում: Հայտարարվում էր. «Խորհուրդների ընտրություններին և դրանց գործունեությանը մասնակցել չի կարող ո՛չ մի շահագործող, ո՛չ մի կեղեքիչ, ո՛չ մի հակահեղափոխական»[4]:

Փաստենք, որ ընտրությունները՝ որպես քաղաքական կարևոր միջոցառում, կազմակերպում, ղեկավարում ու իրականացնում էին կուսակցական-պետական կառույցները: Այդ գործընթացներին աչալուրջ հետևում էին պետական անվտանգության մարմինները: Այսպես, օրինակ, 1921 թ. դեկտեմբերի առաջին կեսին Էջմիածնի գավառում ընթացող խորհուրդների ընտրությունների կապակցությամբ Հայչեկան զեկուցում է ԿԿ-ին, որ «Հակախորհրդային դաշնակ, էսէռ, մենշևիկ, ինչպես նաև անկուսակցականներ ցանկանում են իրենց թեկնածուներին առաջադրել խորհուրդների ընտրություններում»[5]: 1921 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ընտրություններում մասնավորապես արձանագրվել են հետևյալ ցուցանիշները: Էջմիածնի գավառի բոլոր 5 գավառամասերի (գավառակ կամ շրջան) և Վաղարշապատ քաղաքի (առանց բանակի) ընտրողների թիվը կազմել է 89300 մարդ[6]: Ըստ գյուղերի՝ օրինակ, 700 անձից բաղկացած Ֆրանգանոց գյուղի ընտրական ժողովին ներկա էին 90 ընտրող, որոնք ընտրել են գյուղխորհրդի 14 անդամի, իսկ վերջիններից էլ 2 հոգու՝ շրջանային համագումարի համար: Հարևան Դոխս գյուղի 400 անձից ներկա էր 80 հոգի: Ընտրվել է գյուղ-խորհրդի 4 անդամ, որոնցից մեկը՝ շրջանային համագումարի պատգամավոր[7]: Քեռրփալու (Արշալույս) գյուղի 1200 ընտրողներից ներկա են եղել 230-ը: Ընտրվել են գյուղխորհրդի 23 անդամ, իսկ երկուսը՝ շրջանային համագումարի պատգամավոր: Հայթաղի 1200 անձից ներկա էին 140-ը, ընտրել են խորհրդի 20 անդամ, երկուսին գործուղել են շրջանային համագումարի պատգամավոր և այլն[8]:

Ընտրություններին հասարակական-քաղաքական ակտիվության տեսակետից աչքի է ընկել Ալեքսանդրապոլի գավառը, որի գավառային ընտրական

---

[4] Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902-1921 թթ.), Ե., 1960, էջ 622:
[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 123, թ. 39:
[6] Նույն տեղում, ֆ. 116, ց. 3, գ. 62, թ. 2:
[7] Նույն տեղում, թ. 21:
[8] Նույն տեղում, թ. 22:

հանձնաժողովի (ԳՀՀ) աշխատանքները փաստորեն սկսվել էին 1921թ. նոյեմբերի 27-ից: ԳՀՀ-ի անդամներն էին Իվան (Հովհ.) Բաննահյանը, Գևորգ Հանեսօղլյանը, Նարիման Կուրղինյանը, նախագահը՝ Աշոտ Շահմուրադյանը: ԳՀՀ-ն էր նշանակում քաղաքային և շրջանային ընտրական հանձնաժողովները: Տարվել է նախընտրական քարոզչություն Կարմիր բանակում, արհմիություններում: Ալեքսանդրապոլի ընտրողների ընդհանուր թիվը մոտ 8000 էր, մասնակցել է մոտ քառորդ մասը[9]: Գավառը բաղկացած էր 7 գավառամասերից, համապատասխանաբար՝ 27, 18, 29, 35, 22, 24 և 22 գյուղերով (ընդամենը՝ 172): Բոլոր գյուղերում ստեղծվել են ընտրական հանձնաժողովներ՝ կազմված երեք հոգուց (հետագայում՝ 1927 թ. դրանց թիվը սահմանվեց՝ 7): Ընտրարշավի ժամանակ հանձընաժողովի անդամները՝ կուսակցական, կոմերիտական, կոոպերատիվ, կանանց, գյուղական փոխադարձ օգնության կոմիտեների (ՓՕԿ) և այլ ակտիվիստներ զեկուցումներ էին կարդում ՆԷՊ-ի, ընտրությունների, կուսակցության քաղաքականության և այլ թեմաներով: Տպագրում և տարածում էին բուկլետներ, կոչեր, նյութեր «Կարմիր Շիրակ» թերթից և այլն[10]:

Դեկտեմբերի վերջին ավարտվել ու ամփոփվել են բոլոր գյուղերի և Ալեքսանդրապոլի քաղաքային ընտրությունների արդյունքները: Որպես պատգամավոր առաքված ներկայացուցիչներից հրավիրվել են գավառամասային համագումարները, իսկ դրանք էլ ընտրել են պատվիրակ-պատգամավորներ գավառային համագումարի համար:

Գյուղական ընտրությունների և գավառամասային համագումարների ավարտից հետո 1922 թ. հունվարի 17-ին գումարվում է խորհուրդների Ալեքսանդրապոլի գավառային 1-ին համագումարը: Հետաքրքիր է պատգամավորների սոցիալ-կրթական պատկերը: 177 պատգամավորներից Կոմկուսի անդամներ էին 107-ը, անկուսակցական՝ 67-ը և 3-ը՝ հնչակյան: Չնայած ո՛չ ընտրությունների մասին կանոնադրությունում, ո՛չ էլ ՀՍԽՀ սահմանադրության մեջ ակնարկ անգամ չկար կոմկուսի՝ որպես հասարակության միակ ղեկավար և ուղղություն տվող ուժի մասին, ինքնին հասկանալի է, որ պատգամավորության անկուսակցական թեկնածուները, սկսած գյուղականից՝ ավարտած հանրապետական պատգամավորներով, առաջադրվում էին կուսակցական մարմինների կողմից կամ նրանց իմացությամբ՝ հասարակական կազմակերպությունների և աշխատավորական կոլեկտիվների անունից: Պատգամավորներից գրագետ էին 108-ը, անգրագետ՝ 69-ը, 21-ը՝ բանվոր, 54-ը՝ գյուղացի, 92-ը՝ խորհրդային ծառայող և 10-ը՝ մտավորական[11]: Այս ընտրություններից անգամ մի քանի տարի անց Հայկոմկուսի

---

[9] Հիշեցնենք, որ մինչև 1926 թ. քաղաքային խորհուրդների ընտրություններ անցկացվել են միայն քաղաքի կարգավիճակ ունեցող Երևանում և Լենինականում: Հետագայում քաղաքների թիվը ավելանում է (տե՛ս ՀԱԱ, Ֆ. 1, ց. 6. գ. 84, թ. 12, ց. 7, գ. 108, թ. 35-36):

[10] ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 26, թ. 2:

[11] Նույն տեղում, թ. 3:

4-րդ համագումարում (1925 թ.) ԿԿ-ի քարտուղար Աշ. Հովհաննիսյանը, հաշվետու զեկուցման մեջ խոսելով խորհուրդների վիճակի մասին, փաստում էր գյուղխորհուրդների ապարատի ցածր գրագիտությունը: Ըստ նրա, հանրապետության գյուղխորհուրդների նախագահների 10 տոկոսը անգրագետ էր, 35-ը՝ կիսագրագետ, առհասարակ անդամների մոտ 65 տոկոսը անգրագետ կամ կիսագրագետ էր[12]: Անցամ տարիներ անց՝ 1926 թ., անգրագետները և կիսագրագետները գյուղխորհուրդների ողջ համակազմի (14232 անդամ) շուրջ 60 տոկոսն էին կազմում: Խորհուրդների անդամների մոտ 35 տոկոսն ուներ տարրական և միայն 5 տոկոսը՝ միջնակարգ և բարձրագույն կրթություն: Գյուղխորհուրդների 816 նախագահներից անգրագետ էին 106-ը, իսկ 277-ը՝ կիսագրագետ[13]: Նրանց որակական կազմը բարձր լինել չէր կարող, որովհետև կուսակցությունը, ելնելով իր դասակարգային բնույթից, դրանցում ընդգրկում էր գերազանցապես չքավոր գյուղացիների ու բատրակների: Նշենք, որ մինչև 1920-ական թթ. կեսերը Հայաստանում արդյունաբերական բանվոր դասակարգ, ըստ էության, չի եղել, իսկ ընտրողների համեմատաբար ուսյալ և գործունյա հատվածը, սոցիալ-դասակարգային նկատառումով՝ իբրև շահագործող, կուլակային ու հակահեղափոխական տարր, ընտրակարգով զրկված էր ընտրելու և ընտրվելու իրավունքից: Նշանակում է՝ խոսք լինել չի կարող քաղաքացիների իրավահավասարության մասին: Փաստերը ցույց են տալիս, որ ձայնազրկումները հաճախ կատարվել են անհիմն ու անարդար կերպով: Ուստի ձայնազուրկ քաղաքացիները պայքարել են իրենց իրավունքները վերականգնելու համար: Հենց ընտրական գործընթացների ու ընտրապայքարի մեխը կարելի է համարել ձայնազուրկների ինստիտուտի առկայությունը և իշխանություն-ընտրող-ձայնազուրկ եռյակի պայքարը խորհուրդներում տեղ գրավելու համար:

Ինչպես նշեցինք, քաղաքային և գյուղական ընտրությունների նախապատրաստական փուլում առանձին-առանձին կազմվում էին տվյալ գյուղի կամ ընտրատարածքի և՛ ընտրողների, և՛ ձայնազուրկների ցուցակները: Ընտրական հանձնաժողովները դրանք ստուգում էին և փակցնում տեսանելի վայրերում՝ ընտրություններից մեկ շաբաթ առաջ: Գյուղին կցված պատասխանատու լիազորը պարտավոր էր հետևելու այդ գործընթացին, որպեսզի գյուղի կուլակը և քաղաքի նեպմանը դուրս չմնային ձայնազուրկների ցուցակից: Բայց որքան էլ հետևել են ընտրացուցակների «մաքրությանը», այնուամենայնիվ, արձանագրվել են դեպքեր, երբ կուլակ կամ ունևոր համարվածը հայտնվել է ընտրողների, իսկ հասարակ աշխատավոր գյուղացին կամ չքավորը՝ ձայնազուրկների ցանկում. այս հարցում հաճախ դեր է

[12] Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 56:
[13] Նույն տեղում, ֆ. 112, ց. 3, գ. 8, թ. 16-17:

խաղացել անձնական «հաշիվներ մաքրելու» կամ էլ բարեկամական կապերի գործոնը[14]:

Խորհուրդների 1924/1925 թթ. ընտրությունների ժամանակ ուշադրության արժանի եռանդ են ցուցաբերել Դարալագյազի գավառի «կուլակային և հակախորհրդային տարրերը»: Չեկայի՝ 1925 թ. հունվարի 8-ին Հայաստանի կենտգործկոմին (ԿԳԿ) ուղղված մի գաղտնի գրությունում փաստվում է, որ մի շարք գյուղերում, օրինակ՝ Մալիշկա, Բաշքենդ (Վերնաշեն) և այլն «գյուղխորհուրդերն անցել են կուլակային և հակախորհրդային տարրերի ձեռքը»: Հիշյալ գյուղերի ձայնագուրկ կուլակները մինչև իսկ ցանկություն են հայտնել «հեռանալ Խորհրդային Հայաստանից, քանի որ զրկված են ընտրելու իրավունքից»[15]:

1925-1926 թթ., այսպես կոչված, «նոր նէպ-ի» պայմաններում երկրով մեկ խնդիր դրվեց տեղական խորհուրդներում որոշ չափով ընդլայնել ընտրական իրավունքը: Դրա նպատակն էր մարդկանց քաղաքական ու քաղաքացիական ակտիվության խթանման միջոցով նպաստել երկրի տնտեսական աշխուժացմանը: Միաժամանակ, հաշվի էր առնվում նաև ձայնագուրկների բազմաթիվ դժգոհությունների հանգամանքը: 1925 թ. փետրվարին հետևեց ՌԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Լ. Կագանովիչի շրջաբերականը ընտրողների մասնակցությունն ընդլայնելու և ձայնագուրկների թիվը կրճատելու վերաբերյալ: Այդտեղ առաջարկվում էր չմերժել այն անկուսակցական թեկնածուների առաջադրումը, որոնք այս կամ այն կերպ քննադատում էին խորհրդային իշխանությունը, բացի այդ՝ ցուցակներով քվեարկություն չպարտադրել, և այլն[16]:

Այդ ընտրական մեղմացումների շնորհիվ, օրինակ, հանրապետության ամենափոքր գավառի՝ Մեղրիի ձայնագուրկների թիվը մի քանի անգամ կրճատվեց: Այսպես, եթե նախորդ՝ 1924/25 ընտրական տարում ձայնազրկվել էին 70 մարդ, ապա 1925/26-ում՝ 29 հոգի: Ընդ որում, դրանցից 6-ը բողոք էին ներկայացրել իրենց ձայնի իրավունքը վերականգնելու, և մերժվել էր միայն մեկի դիմումը: Եթե 1924/25 ընտրափուլում ընտրություններին մասնակցել է ընտրողների 38 տոկոսը, ապա 1925/26-ին՝ 62-ը[17]: Կոտայքի գավառամասում ևս ձայնագուրկների թիվը կրճատվել է: Նախորդ՝ 176-ի փոխարեն, 1925/26 ընտրատարում՝ այն ընդամենը 71-ն էր, այսինքն՝ նվազել է 2,4 անգամ[18]: Նույն կերպ նաև Վաղարշապատում. 134-ից իջել է 93-ի, Դիլիջանի գավառում՝ 636-ից 186-ի, Դարալագյազում՝ 285-ից 76-ի և այլն[19]:

---

[14] *Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 188, թ. 65-66:*

[15] *Նույն տեղում, ց. 6, գ. 2, թ. 12:*

[16] *Նույն տեղում, ց. 1, գ. 190, թ. 5:*

[17] *Նույն տեղում, ց. 2, գ. 74, թ. 23-24:*

[18] *Նույն տեղում, թ. 46:*

[19] *Նույն տեղում, ֆ. 1, ց. 6, գ. 82, թ. 56:*

Գավկոմի քարտուղար Հ. Գրիգորյանը ԿԳԿ ուղարկած հաշվետու զեկուցման մեջ և ԿԿ կազմբաժնին հղած տեղեկագրում հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Դարալագյազի գավառում 15.XI.1925-8.III.1926 թթ. անցկացված ընտրությունների վերաբերյալ: Նա փաստում է, որ նախորդ՝ 1924 թ. ընտրությունների ընթացքում «ընտրական հանձնաժողովները անձնական հողի վրա շատ գյուղացիների ձայնագուրկ են արել, որի հետևանքով գյուղացիական որոշ հատվածներում դժգոհություններ են առաջացել»[20]: Եթե այդ ժամանակ գավառի ձայնագուրկների թիվը հասնում էր 450-ի և վերանայելուց հետո իջավ 250-ի, ապա 1925/26 ընտրաշրջանում այն ընդամենը 71 էր: Ձայնագուրկների թվի նման կտրուկ՝ վեցակի կրճատումը գավառի ղեկավարը բացատրում է նրանով, որ «հանձնաժողովները լուրջ չեն մոտեցել այդ գործին»[21]:

Ամբողջ գավառում ընտրական իրավունք ունեցող 14433 քաղաքացիներից 7460-ը կամ շուրջ 52 տոկոսը մասնակցել է ընտրություններին: Նախորդ տարվա համեմատ՝ այդ աճը ավելացել է մոտ 40 տոկոսով: Կանանց մասնակցությունը կազմել է 17 տոկոս: Եթե նախորդ ընտրություններում գավառի գրեթե բոլոր գյուղերում ներկայացվել են տասնյակ ցուցակներ, և քվեարկությունը տեղի է ունեցել դրանցով, ապա 1925/26 թթ. ընտրություններում թեկնածուներին քվեարկել են անհատապես, թեպետ ցուցակներ դարձյալ եղել են[22]: Բայցի այդ, արձանագրվել են դեպքեր, երբ, օրինակ, նույն գավառի Մարտիրոս գյուղում ակտիվիստ գյուղացիները (նշված է՝ «կուլակ») պահանջել են **քվեարկություններ կատարել գաղտնի**[23]: Այդ առաջարկությունը չի ընդունվել, որովհետև գործող ընտրակարգով փակ քվեարկություն չէր թույլատրվում:

Ի տարբերություն հայկական գյուղերի՝ թուրքականում շատ են տարածված եղել խմբակային (թայֆայական) ընտրությունները, երբ ամեն մի խումբ փորձել է ընտրել իր «մարդուն»: Սովորաբար թուրք կանայք չէին մասնակ-ցում ընտրություններին: Իսկ եթե որևէ խումբ ցանկանում էր անցկացնել «իր մարդուն», ապա կանանց ստիպում էր մասնակցել ընտրաժողովին:

Ցածր է եղել նաև հայ կանանց մասնակցությունը ընտրություններին: Տղամարդկանց և կանանց մասնակցության համեմատական պատկերը 1926 թ. գյուղական խորհուրդների ընտրություններում հետևյալն է. հանրապետությունում ընտրական ձայնի իրավունք ունեցող 187,5 հազար գյուղացիներից ընտրություն-ներին մասնակցել են 145 հազարը (77,3 տոկոս), իսկ 172.9 հազար գեղջկուհի-ներից՝ միայն 27,4 հազարը (15,8 տոկոս): Ընդհանուր առմամբ, 360,4 հազար գյուղացի ընտրողների միջին մասնակցությունը կազմում է 48 տոկոս: Գյուղական

[20] Նույն տեղում, թ. 1:
[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 74, թ. 3:
[23] Նույն տեղում:

խորհուրդների՝ 1927 թ. փետրվարյան ընտրություններին, 432 գյուղերի ամփոփ տվյալներով (սա հանրապետության ընդամենը 821 գյուղերի կեսից ավելին է, որում չեն ներառված Զանգեզուրը և Մեղրին ամբողջությամբ, իսկ Երևանի, Լենինականի և Դարալագյազի գավառները՝ մասամբ), ընտրողների թիվը կազմել է 197956, որից ընտրություններին մասնակցել են 92025 մարդ կամ 46,5 տոկոսը[24]:

Լենգավառի գյուղխորհուրդների ընտրությունների արդյունքներն ամփոփված են գավկոմի քարտուղար Գ. Հանեսօղլյանի՝ 1926թ. վերադաս մարմիններին ներկայացրած տեղեկանք-զեկուցագրում: Նա նշում է, որ կազմակերպվել է նախընտրական լայն արշավ, գյուղեր են գործուղվել պատասխանատուներ, ագիտատորներ: Ընտրաժողովների մասնակիցների թիվը կազմել է մոտ 45 տոկոս 1924 թ. 32-ի փոխարեն, բացի այդ, գավառի առանձին գյուղերում էլ են նկատվել «թայֆաներ»: Միաժամանակ, գավկոմի քարտուղարը ուշադրություն է հրավիրում մի մտահոգիչ հանգամանքի վրա, այն է՝ «սառնություն է նկատվել տեղացիների և գաղթականների միջև»[25]: Խնդիրն այն է, որ տեղացիները չէին կամենում ընտրել գաղթական վերաբնակիչների: Ավելին, նրանք չէին ցանկանում, որ գաղթականներն անգամ ապրեին իրենց գյուղերում և հող ստանային: Խտրական մոտեցման հետևանքով, շատ գաղթական թեկնածուներ չէին ընտրվում տվյալ գյուղխորհրդի կազմում: Գ. Հանեսօղլյանի հայտնած տվյալներով՝ գավառի գյուղացիական տնտեսությունների սոցիալական պատկերը եղել է հետևյալը. կուլակներ՝ մոտ 4 տոկոս, միջակներ՝ 60, չքավորներ և բատրակներ՝ 36: Ընդ որում՝ տեղական խորհուրդներում, որպես կանոն, բատրակների չեն ընտրել, որովհետև նրանց համարել են անգրագետ և անգործունյա[26]:

Սոցիալական կազմի տեսակետից գրեթե նույն պատկերն էր Դիլիջանի գավառում. ունևորներ՝ 4, միջակներ՝54 և չքավորներ՝ 42 տոկոս: 1925/26 ընտրաշրջանում գավառում ձայնազրկվել են 393 հոգի, որից 10-ը համար-վել է ձեռնարկատեր, 39-ը՝ անաշխատ եկամուտով ապրող, 187-ը՝ առևտրական, 66-ը՝ կրոնավոր, 44-ը՝ նախկին դաշնակցական պաշտոնյաներ, 20-ը՝ հոգեկան հիվանդներ, 22-ը՝ազատազրկվածներ և 5-ը՝ այլ անձինք[27]:

Կենտրոնական և տեղական իշխանությունների ուշադրության կենտրոնում էր ընտրությունների (կամ վերընտրությունների) հարցը, քանզի դրանք քաղաքական համակարգի կայացման կարևոր գործոն էին:

Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) մարմինները շարունակում էին ուշի ուշով հետևել տեղական խորհուրդների ընտրություններին և ուսումնասիրել բնակչության տրամադրությունները: 1926 թ. կազմված ամփոփագրերից մեկում, իբրև նկատված թերություններ, մատնանշվում էին ընտրական

---

[24] *Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 103, թ. 42:*

[25] *Նույն տեղում, ց. 6, գ. 82, թ. 35:*

[26] *Նույն տեղում, թ. 38:*

[27] *Նույն տեղում, թ. 103:*

հանձնաժողովների վատ աշխատանքը, ընտրացուցակների անճշտությունները, ձայնազուրկներին ընտրացուցակներում ընդգրկելը և, ընդհակառակը, ձայնի իրավունք ունեցող առանձին չքավորներին չընդգրկելը, ընտրացուցակները ժամանակին չփակցնելը, ընտրողներին անբավարար չափով իրազեկելը և այլն[28]:

Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրացուցակները կազմելու ժամանակ հաճախ վեճեր էին առաջանում ոմանց ուսնորության աստիճանը որոշելու, նաև կասկածելի թվացող մարդկանց քաղաքական համոզմունքները հաշվի առնելու հարցում: Վարձու աշխատողներ պահող տնտեսատերերին հայտնաբերելու համար գավգործկոմները,Աշխատանքի և ՆԳ ժողկոմատների հետ փոխադարձ համաձայնությամբ, գյուղխորհուրդներին տրամադրում էին հատուկ գրանցամատյաններ, որտեղ հաշվառվում էր տվյալ տնտեսատիրոջ վարձու աշխատողների թիվը: Ըստ այդմ էլ՝ որոշվում էր նրա ընտրական իրավունքի հարցը[29]: Մեկ մշտական վարձու աշխատող կամ հովիվ պահողը կուլակ չէր համարվում և չէր զրկվում ընտրական իրավունքից: ՀԽՍՀ ԿԳԿ նախագահության քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրությունների վերաբերյալ հրահանգով (27.X.1925) մասնավորապես սահմանվում էր, որ ընտրական իրավունքից չեն զրկվում ջրաղացների, դինգերի, ձիթհանների, դարբնոցների և նման ձեռնարկու-թյունների այն տերերը, որոնք ունեն մշտական մեկ վարձու բանվոր կամ մինչև երկու աշակերտ[30]: Սակայն այդ կանոնին միշտ չէին հետևում:

Այնուամենայնիվ, եթե 1925-1926 թթ. «երեսներս դեպի գյուղ» կարգա-խոսի իրագործման պայմաններում որոշ չափով աճեց քվեարկելու իրավունք ունեցողների թիվը, ապա հետագայում «տրոցկիզմի» և մյուս «հակա»-ների դեմ պայքարի ուժեղացմանը զուգընթաց, ընտրական մեղմացումներին հաջորդեցին խստացումները, և ձայնազուրկների թիվը կրկին աճեց: 1927 թ. մայիսին փոփոխ-ված ՀԽՍՀ ընտրական հրահանգով կրկին շեշտվում էր, որ ձայնազուրկների թվին պետք է դասել նախկին մառզերիստներին, վարձու աշխատանք շահագոր-ծողներին, առևտրականներին, հոգևոր ծառայողներին, ջրաղացի և ձիթհանի տերերին, մեղվաբույծներին, կոշիկի և այլ արհեստանոցների տերերին[31]: Ընտրական իրավունքից զրկվում են երկու վարձու աշխատող ունեցող հողագործները[32]: Այսպես՝ եթե 1926 թ. գյուղական վայրերում ձայնազուրկների թիվը կազմում էր 0,84, քաղաքներում՝4,78 տոկոս, ապա 1929 թ. այն ավելացավ մի քանի անգամ, համապատասխանաբար՝6,9 և 16,2 տոկոս[33]: Ի դեպ, այս խնդրում

---

[28] Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), Ե., 2008, էջ 195:

[29] ՀԱԱ, Ֆ. 112, ց. 2, գ. 85, թ. 11:

[30] Խորհրդային Հայաստան, 1.XI.1925:

[31] ՀԱԱ, Ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 47-48:

[32] Խորհրդային Հայաստան, 5.I.1928:

[33] ՀԱԱ, Ֆ. 112, ց. 1, գ. 1746, թ. 119, գ. 2318, թ. 3-4, ց. 3, գ. 8, թ. 18, նաև Ղազախեցյան Վ. Ն., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 329:

Ռուսաստանում պատկերը հետևյալն էր՝ եթե 1924 թ. ձայնագուրկները կազմել են միջինը 4, ապա 1927 թ.՝ 6 տոկոս[34]: Տվյալներ կան, որ ամբողջ Ռուսաստանի մասշրջանաբով 1920-ական թթ. կեսերին ձայնազուրկների թիվը եղել է մոտ 5մլն մարդ[35]:

1929 թ. ամփոփ տվյալներով, Հայաստանի գյուղական վայրերում կային 27511 ձայնազուրկ, որոնց 8 տոկոսը կամ 2219-ը եկեղեցու սպասավորներն էին[36]: Հատկանշական է, որ այս շրջանում սկսեցին ավելի հաճախակի ներգրավել նաև ձայնազուրկների ընտանիքների անդամներին, որը, բնականաբար, մեծացրեց ձայնազուրկների տեսակարար կշիռը: Ընտրացուցակները կազմող տեղական խորհուրդները և ընտրական հանձնաժողովները ձայնազուրկների ցուցակում հաճախ ընդգրկում էին իրենց անցանկալի միջակների և անգամ չքավորների: Այլապես, ինչպես բացատրել, որ, օրինակ, Նոր Բայազետի գավառում ձայնազուրկների քանակը սկզբում եղել է 2160, իսկ մարդկանց զանգատ-բողոքների հիման վրա վերին ատյաններում դրանք քննելուց հետո այն ավելի քան կրկնակի պակասել է՝ մնալով 960 մարդ: Նույն կերպ, օրինակ, Դարալագյազի գավառում ձայնազուրկների թիվը կրճատվել է 1,6 անգամ՝ 900-ից իջնելով 550-ի[37]:

Ձայնազուրկների մասին ավելի առարկայական պատկերացում կարող է տալ, օրինակ, Լոռի-Փամբակ գավառը (տե՛ս աղ.)

Գավառամաս կամ շրջան /1927 թ./	Բնակչության թիվը	Ընտրելու իրավունք ունեցողներ	Ձայնազուրկներ	Վերականգնվել են
1.Ղարաքիլիսայի	19012	8853	731	313
2. Համամլուի	26923	12607	1163	523
3. Դսեղի	14288	6961	296	48
4.Ստեփանավանի	23964	10900	759	245
5.Վորոնցովկայի	18138	7917	726	253
6. Ալավերդու	23428	11420	638	187
Ընդամենը	**125753**	**58658**	**4313**	**1569**
Ղարաքիլիսա քաղաքը	8405	2730	644	34[38]

[34] **Щетинов Ю. А.** *История России, XX век, М., 1999, с. 143.*

[35] *Отечественная история, М., 2006, с. 70.*

[36] **Ղազախեցյան Վ. Ն.**, *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմու-թյուն. 1920-1929 թթ., Ե., 1975, էջ 335-336: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 2318, թ. 3-4:*

[37] *ՀԱԱ, ֆ.112, ց. 2, գ. 133, թ. 38-39:*

[38] *Նույն տեղում, թ. 62բ:*

Աղյուսակից երևում է, որ գավառի ձայնազուրկների ընդհանուր թիվը, առանց Ղարաքիլիսա քաղաքի, 4313 էր, որից 1569 հոգու ընտրական իրավունքի վերականգնումից հետո ձայնազուրկ է մնացել 2744-ը: Գավառի ձայնազուրկները կազմել են ընտրական իրավունք ունեցողների 4,67 տոկոսը: Ղարաքիլիսայի՝ ընտրական իրավունքից զրկված 644 հոգին կազմում էր քաղաքի բնակչության ընդհանուր թվի 7,66 տոկոսը, իսկ ձայնի իրավունք ունեցողների թվի՝ 23,58 տոկոսը, որ բավական մեծ տեսակարար կշիռ է:

1920-ական թթ. երկրորդ կեսի ընտրական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսապես ամուր, ունևոր տարրերը դարձյալ փորձել են խորհուրդների միջոցով թափանցել տեղական իշխանության մարմիններ կամ այնտեղ անցկացնել տալ իրենց հարմար թեկնածուներին: Դրան հասնելու համար տեղ-տեղ անգամ դիմել են ընտրակաշառքների: Մյուս կողմից՝ սովորաբար իրատես մտածող ու գործունյա ընտրողները չեն ցանկացել, որ խորհուրդներ մտնեն անգրագետ և քաղաքականապես տհաս չքավոր ու բատրակային տարրերը: Այսպես, ընտրաժողովների ժամանակ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտրողներն իրենց ելույթներում բատրակներին ընտրացուցակներում ընդգրկելու և նրանց օգտին քվեարկելու դեմ են արտահայտվել. «Բատրակի՛ն չպետք է ընտրել, որովհետև, եթե լավ տնտեսվար լիներ, բատրակ չէր մնա», «չոբան մարդու խելքն ինչ կհասնի, որ գեղ կառավարի, պիտի ընտրեն այնպիսի մարդկանց, որ գործ անեն, կառավարեն»[39]: Ղարաքիլիսայի գավառամասի Վոսկրեսենովկա (այժմ՝ Լերմոնտով) գյուղի կուլակ համարվող Բիրյուկովը և Շուտովը գյուղացիներին հորդորել են, որ իրենց ընտրեն, «որովհետև չքավոր ները ծույլ են ու անբան, իսկ ունևորները խելոք են ու աշխատասեր»[40]: Խորհրդային մամուլում տեղեկատվություն է տպվել այն մասին, որ Էջմիածնի Զանգիբասարի շրջանի Խաչափարախ (Զահմաթ) գյուղի մի ունևոր գյուղացի ձայնի իրավունքը վերականգնելուց հետո 1926 թ. խորհրդի գարնանային ընտրությունների ժամանակ երեքական ռուբլի է առաջարկել այն համագյուղացիներին, որոնք պիտի պաշտպանեն իր թեկնածությունը[41]: Ղամարլուի գավառամասի Դոխգյուզ (Կանաչուտ) գյուղի՝ 1927 թ. փետրվարին կայացած խորհրդի ընտրություններում հաջողվել է անցկացնել կուլակ Սիսակ Ղազարյանի թեկնածությունը[42]: Վորոնցովկայի գավառամասի Նորաշեն գյուղի ակտիվիստներից մեկը, որ ցանկացել է անպայման գյուղխորհրդի նախագահ դառնալ, խորհրդի ընտրությունների նախօրյակին «կով է մորթում և պատվիրում իր գիտեցած մարդկանց, որ իրեն ընտրեն»: Սակայն չի ընտրվում և վերջում «կռիվ

[39] Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 103, թ. 10; գ. 108, թ. 51:
[40] Նույն տեղում, ց. 8, գ. 69, թ. 4:
[41] Խորհրդային Հայաստան, 10.IV.1926:
[42] Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 103, թ. 19-20:

է սարքում, թե դուք եկե՛լ եք իմ տունը, քե՛ֆ եք արել, իմ գինին խմել և ինձ ձեն չե՞ք տալիս»[43]: 1929 թ. մարտին գյուղխորհրդի նախագահ ընտրվելու փորձ է արել Էջմիածնի գավառի Մոլլաղասի գյուղխորհրդի նախկին նախագահ ոմն Հմայակ: Այդ նպատակով, նախքան ընտրությունները գնել է 7 դույլ գինի, մեկ ոչխար և քեֆ է կազմակերպել ընտրողների հետ[44]:

Ձայնազրկման գործընթացներն ավելի հաճախացան համատարած կոլեկտիվացման շրջանում՝ ընդհուպ մինչև 1936 թ., երբ կուլակաթափման հետ միաժամանակ գյուղացուն զրկում էին ընտրական իրավունքից կամ վտարում գյուղից: ՀԱԱ ԿԳԿ-ի ֆոնդի ցուցակներից մեկի տասնյակ գործերում հազարավոր գյուղացիների գանգատ-դիմումներ կան, որոնք ուղղված էին ԿԳԿ-ին կից գործող՝ ընտրական իրավունքից զրկված քաղաքացիների գանգատները քննող Կենտրոնական հատուկ հանձնաժողովին: Նրանք դիմել են կուլակաթափման առնչությամբ, միաժամանակիրենց ընտրական իրավունքի վերականգնման խնդրանքով[45]:

Այսպիսով՝ 1920-ական թթ. բոլշևիկյան միակուսակցական վարչակարգի ձևավորման պայմաններում Խորհրդային Ռուսաստանի օրինակով ու նմանակմամբ Հայաստանում ևս ձևավորվեց պետական իշխանության բարձրագույն մարմին հանդիսացող խորհուրդների ընտրական համակարգը, որն իր բնույթով դասակարգային էր, բազմաստիճան, խտրական, ոչ ազատ, անհավասար, այսինքն՝ ոչ ժողովրդավարական: Քաղաքային և գյուղական ընտրական գործընթացներում շատ էական էր ձայնազրկման երևույթը, որով որոշվում էր նաև տվյալ քաղաքացու սոցիալական կարգավիճակը: Խուրհուրդների՝ բոլոր մակարդակի ընտրությունները, լինելով քաղաքական գործընթաց, ամբողջովին կազմակերպվել, վերահսկվել և ուղղորդվել են կուսակցական-պետական մարմինների կողմից՝ սկսած ընտրացուցակներ կազմելուց, ընտրարշավից մինչև պատգամավորների ընտրությունը, տեղական ու կենտրոնական իշխանությունների ձևավորումը: Չնայած ՀԽՍՀ Սահմանադրության մեջ ակնարկ անգամ չկա Կոմկուսի՝ միակ ղեկավար և ուղղություն տվող ուժի մասին, սակայն դա չի խանգարել, որ այն միանձնյա տնօրիներ խորհուրդների ընտրությունները և տեղական ու կենտրոնական իշխանության մարմինների ձևավորումը:

---

[43] *Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 133, թ. 58:*

[44] *Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 602, թ. 350:*

[45] *ՀԱԱ, Ֆ. 112, ց. 6, գ. 9, 37, 43, 72, 91, 114, 168, 207, 251, 268 և այլն:*

ИЗБИРАТЕЛЬНЫЕ ПРОЦЕССЫ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920-Х ГГ.

АКОПЯН А. М.

Резюме

В условиях большевистского однопартийного режима в Армении, по примеру Советской России, сформировалась избирательная система советов, которая по своему характеру была классовой, многоступенчатой, не всеобщей и неравной.

Изучение избирательных процессов явствует о том, что выборы полностью контролировались партийно-государственными органами. В местных выборах избирательное право определялось социальным статусом граждан. Представители богатой прослойки, кулаки, торговцы, а также духовенство были лишены права голоса. Обычно избиратели выступали против голосования по спискам, заранее подготовленным партийными и советскими органами, требуя проведения индувидуального, даже закрытого голосования, что не было предусмотрено уставом выборов. Подобная система выборов существовала до середины 1930-х годов, до завершения всеобщей коллективизации и победы социализма в стране.

THE ELECTORAL PROCESSES IN THE SOVIET ARMENIA IN THE 1920-s

A. HAKOBYAN

Abstract

In the conditions of the Bolshevik one-party regime in Armenia, as in Soviet Russia, the electoral system boards were formed, which by its nature was class, multi-stage, not general and unequal.

The study of the electoral processes gives a clear picture that the elections were entirely controlled by the party and governmental bodies. The right to vote in local elections was determined by the social status of citizens. Representatives of the rich stratum of the population, kulaks, merchants and the clergy were deprived of the right to vote. Typically, voters opposed to vote based on the lists prepared in advance by party and governmental bodies, demanding individual, even a secret ballot, which was not provided by the charter of the elections. This electoral system existed until the mid-1930s - the completion of the general collectivization and the victory of socialism in the country.